Ուղեցույց

- Պլանետարումի գմբեթի մուտքի մոտ Ձեզ կտրվեն հետևյալ իրերը.
    1. B նշումով ծրար.
    2. վայրկյանաչափ, լապտեր և կանաչ գրիչ պարունակող տրծակ.
    3. գրելու համար տախտակ:
- Համոզվեք, որ B նշումով ծրարի վրայի մասնակցի կոդը ճիշտ է:
- Հարցաշարը, երկու աստղային քարտեզ և answersheet-երը գտնվում են ավելի փոքր՝ S ծրարում: **Այս ծրարը թույլատրվում է բացել միայն փուլի սկիզբը ազդարարող սուլիչի հնչելուց հետո:** Փուլի տևողությունը (1 ժամ) հաշվարկվում է այս պահից:
- Փուլը կազմված է երկու խնդրից՝ OP01 և OP02: Ձեզ կտրվի **15 րոպե** խնդիրները կարդալու և դիտման պլանավորման համար: Այս ընթացքում պլանետարիումի լույսերը կլինեն միացված:
- Լույսերի անջատվելուց հետո օգտագործեք լապտերի «թույլ» լույսը՝ այլ մասնակիցներին չխանգարելու համար:
- OP01 խնդրին տրված ժամանակը **15 րոպե** է.
    - մթությանը ադապտացվելու ու երկնքին ծանոթանալու համար՝ 3 րոպե.
    - խնդրի հիմնական մասը՝ 12 որպե:
- OP02 խնդրին տրված ժամանակը **10 րոպե** է.
- Ամեն խնդրի սկիզբն ու վերջը կազդարարվի սուլիչով.
- Խնդրիների միջև կլինի **2 րոպեանոց** ընդմիջում.
- Ամեն խնդրին մնացած ժամանակը կցուցադրվի գմբեթի վրա՝ ամեն րոպեն մեկ. եղեք ուշադիր.
- Դիտումների ավարտից հետո լույսերը կմիացվեն, և կտրվի **18 րոպե**՝ պատասխանները վերջնականացնելու համար.
- Եթե ինչ-որ բան նշելու համար մատիտ եք օգտագործել, պարզության համար վրայից նույնը գրեք Ձեզ տրված կանաչ գրիչով.
- Փուլի կամայական պահի թույլատրվում է վեր կենալ և տեղում պտտվել, բայց տեղից շարժվել չի կարելի;
- Փուլի ընթացքում պահպանեք լռություն.
- Քննության կազմակերպումը հետևյալ կերպ է/

Միացված լույսեր	15 որպե	Խնդիրների ընթերցում և դիտման պլանավորում
Անջատված լույսեր.	27 ր. 20 վ.	Դիտումներ
ժամանակ (min:sec)	**տևողություն**	**Դիտումներ**
00:00 – 00:10	10 վրկ.	«Խնդիր OP01» գրություն գմբեթին
00:10 – 15:10	15 որպե	OP01 խնդրի դիտում
15:10 – 17:10	2 որպե	Ընդմիջում
17:10 – 17:20	10 վրկ.	«Խնդիր OP02» գրություն գմբեթին
17:20 – 27:20	10 որպե	OP02 խնդրի դիտում
Միացված լույսեր	18 որպե	Հաշվարկ և վերջնականացում

- **Փուլի վերջում.**
  - Ստուգեք բոլոր եղած թղթերի վրա Ձեր մասնակցի կոդը ճիշտ գրած լինելը.
  - Դասավորեք թղթերը հետևյալ հերթականությամբ.
    OP01-ի answersheet-ը, Map-OP01 քարտեզը, OP01-ի օգտագործված աշխատանքային թերթերը,
    OP02-ի answersheet-ը, Map-OP02 քարտեզը, OP02-ի օգտագործված աշխատանքային թերթերը.
  - Վերը նշված ձևով դասավորված բոլոր օգտագործած թերթերը դրեք S ծրարի մեջ: Բոլոր answersheet-երն անհրաժեշտ է դնել S ծրարի մեջ՝ անկախ նրանից, օգտագործել եք դրանք, թե ոչ:
  - **Գնահատվում է միայն S ծրարի պարունակությունը: Ծրարից դուրս ոչ մի թերթ չի գնահատվում:**
  - Դրեք փոքր S ծրարը մեծ B ծրարի մեջ:
  - Մյուս բոլոր թերթերը՝ ուղեցույցը, խնդիրները, հաստատունների ցուցակը և չօգտագործված աշխատանքային թերթերը ուղղակիորեն դրվում են B ծրարի մեջ:
  - Կապեք B ծրարի թել-կնիքը:
  - Վայրկյանաչափը, լապտերը և կանաչ գրիչը դրեք տրծակի մեջ:
  - Տարեք B ծրարը, գրելու համար տախտակը և տրծակը ելքի մոտ և թողեք դրանց համար հատկացված արկղերում: